

ԱԶԵՐՊԱՅՃԱՆ

ԱԼԻԵԻ. «ԶՐԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐՈՒ ՊԱԿԱՍԸ ՄԵՋԻ ՀԱՄԱՐ ԼՈՒՐՋ ԽՆԴԻՐ Է»

«Զրային պաշարներու պակասը լուրջ մտահոգություն կը յառաջացնէ ոչ միայն Ազերպայճանի, այլև մեր ամբողջ տարածաշրջանին մէջ»,- յայտարարած է Ազերպայճանի նախագահ Իլհամ Ալիև, Շրջակայ միջավայրի համաշխարհային օրուան առթիւ հրապարակած իր ուղերձին մէջ:

«Կասպից ծովու մակարդակին նուազումը, որ կը մօտենայ վերջին երկու հարիւրամեակներու պատմական նուազագույնին, այս խնդրին լրջութեան վառ ապացոյցն է»,- ըսած է Ազերպայճանի նախագահը:

\* \* \*

Ազերպայճանի նախագահին այս խօսքերը բնաւ պետք չէ անուշադրութեան մատուցել: Անոնք կրնան թէ՛ ջրային պաշարներով հարուստ հաստատեան տարածքներու նկատմամբ «թաքուն» փորձակներ մատուցել (ի գուր չէ, որ Ալիև կը շարունակէ խօսիլ Սեւանայ լիճին մասին եւ զայն կոչել ազերպայճանական անունով), եւ թէ՛ խաղաղութեան հաստատման պարագային՝ շատ կարեւոր խաղաքարտ հանդիսանալ Հայաստանի ձեռքին: Մեր ընթերցողները հաւանաբար կը յիշեն, որ քանի մը ամիս առաջ Ռեմ Դարբինեան հրապարակած էր քարտէս մը՝ ցոյց տալու համար, թէ Հայաստան որքա՛ն հարուստ է ջրային պաշարներով: Այս հարցին մասնագիտական վերլուծումը, անշուշտ, կը ձգենք փորձագէտներուն: ■

ԱՄՆ – ԻՐԱՆ

ԻՐԱՆՑԻ ՖՈՒԹՊՈԼԻՍՏՆԵՐԸ ՊԻՏԻ ԿԱՐԵՆԱՆ ԱՄՆ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼ ԻՐԱՔԱՆՉԻՐ ՄՐՑՈՒՄԷՆ ՄԻԱՅՆ ՄԷԿ ՕՐ ԱՌԱՋ

Ֆուտպոլի 2026-ի Համաշխարհային բաժակի մրցումները կը սկսին յառաջիկայ Հինգշաբթի օր, Յունիս 11-ին, Մեքսիքայի նշանաւոր «Azteca» մարզադաշտին մէջ, Մեքսիքա-Հարաւային Ափրիկէ հանդիպումով: Միացեալ Նահանգներու, Մեքսիքայի եւ Գանատայի համատեղ հիւրընկալութեամբ կազմակերպուած մրցաշարքին աւարտական մրցումը տեղի պիտի ունենայ Յուլիս 19-ին, Նիւ Եորքի «MetLife Stadium»-ին մէջ:



Այս մրցաշարքը արդէն իսկ կոչուած է պատմական դառնալու. արդարեւ, ֆուտպոլի տարեգրութեան մէջ առաջին անգամ ըլլալով հիւրընկալող երկիրը պիտի ընդունի իրեն հետ պատերազմական իրավիճակի կամ խիստ լարուած յարաբերութիւններու մէջ գտնուող երկրի մը ազգային հաւաքականը:

Այս բացառիկ ենթախորքին՝ Իրանի ֆուտպոլի դաշնակցութեան նախագահ Մեհտի Քաժ յայտարարած է, որ իրենց երկրի ազգային ընտրանիին արտօնուած է Միացեալ Նահանգներ մուտք գործել Համաշխարհային բաժակի շրջանակէն ներս տեղի ունենալիք իւրաքանչիւր մրցումէ միայն մէկ օր առաջ:

Թէեւ Իրանի հաւաքականին հիմնական կեցավայրը պիտի ըլլայ Մեքսիքայի մէջ, սակայն իրանցի ֆուտպոլիստները խմբային փուլի գտման երեք մրցումներն ալ պիտի խաղան ԱՄՆ-ու տարածքին: Ըստ նախատեսուած ժամանակացոյցին՝ Յունիս 15-ին Լոս Անճըլըսի մէջ անոնք պիտի մրցին Նոր Զելանտայի, Յունիս 21-ին՝ դարձեալ նոյն քաղաքին մէջ՝ Պել-ճիքայի, իսկ Յունիս 26-ին Սիէթլի մէջ՝ Եգիպտոսի հաւաքականին դէմ:

Նախապէս, Մեքսիքայի մէջ Իրանի դեսպան Ապոլֆազլ Փասանտիտէն յայտնած էր, որ հաւաքականի մարզիկներն ու թէքնիք անձնակազմը պարտաւոր են Միացեալ Նահանգներ ժամանելու միայն խաղերու օրը եւ նոյն օրուան ընթացքին ալ վերադառնալու Մեքսիքայի իրենց կեցավայրը: Սակայն Իրանի ֆուտպոլի դաշնակցութեան նախագահը, իրանեան կիսապաշտօնական ISNA լրատու գործակալութեան հետ զրոյցի ընթացքին, հերքած է այս տեղեկութիւնը՝ յստակացնելով. «Արտօնեցին, որ մեր ազգային խումբը մրցումէն մէկ օր առաջ մուտք գործէ երկիր»:

Միացեալ Նահանգներու Արտաքին գործոց նախարարութեան համաձայն ֆուտպոլի այս հեղինակաւոր մրցաշարքին մասնակցելու համար իրանցի մարզիկներուն եւ անձնակազմին մուտքի արտօնագրերը արդէն իսկ պատրաստ են ու տրամադրուած: Թէեւ պաշտօնական աղբիւրները չեն յստակացնել, թէ խաղի աւարտէն ետք իրանցիները որքա՞ն ժամանակի ընթացքին պէտք է լքեն ԱՄՆ-ու տարածքը: ■

ՇԱՐՈՒՆԱԿ ՎԵՐՍՏԵՂԾՈՒԵԼՈՒ ԱՐՈՒԵՍԱԸ

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԵԱՆՔԻ, ԱՍՊԱՐԷՋԻ ԵՒ ՇԱՐՈՒՆԱԿ ՎԵՐԱՓՈՒՍՈՒԵԼՈՒ ԱՐՈՒԵՍՏԻՆ ՄԱՍԻՆ

Գրեց՝ ՀՐԱՋ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

Կեանքը աւարտած նկար մը չէ, որ պատէն կախենք ու հեռուէն հիացումով դիտենք, թէ մենք ո՞վ կամ ի՞նչ ենք: Կեանքի «կտաւը» շրջանակի մէջ առնուած յայտարարութիւն մը չէ, ըսելու համար՝ «Ահա՛, այս է կեանքս»: Այդպէս դիտել կեանքը՝ կը նշանակէ չգիտակցիլ անոր բուն էութեան: Կեանքը հոսուն է, շարժուն, անդադար փոփոխութեան մէջ գտնուող գոյութիւն մը՝ ապրող արուեստի գործ մը, որ ամէն վայրկեան ուրիշ ձեւ կը ստանայ: Նոյնն է նաեւ ասպարէզի ճամբան:

Կարելի է կեանքը երեւակայել որպէս կտաւ մը, որ տակաւին նկարակալին վրայ կը մնայ եւ երբեք ամբողջապէս չ'աւարտիր: Ամէն օր անոր կը մօտենանք նոր աչքերով, վրձինը ձեռքին, որ գոյն մը աւելցնենք, մանրամասնութիւն մը սրբագրենք, կամ երբեմն ամբողջ բաժիններ ծածկենք՝ նոր բան մը ծնելու կամ ստեղծելու համար: Այս պատկերացումը ինձի օգնած է կեանքը տեսնելու որպէս ընթացք մը՝ կտաւ մը, ուր շարունակ կը ստեղծենք եւ կը վերստեղծենք մենք զմեզ:

Անկատարութիւնը ընդունիլ

Կեանքի փորձառութիւնը, ինչպէս արուեստը, մեզի կը սորվեցնէ, թէ կատարելութիւնը նպատակ չէ: Գլուխ գործոցները հազուադէպօրէն անթերի գործադրութեան արդիւնք կ'ըլլան: Անոնք կը ծնին արուեստագէտին համարձակութենէն՝ փորձելու, սխալելու, անակնկալը գրկաբաց ընդունելու: Նոյնն է նաեւ ապրելու պարագան: Ամէն սայթաքում, ամէն անորոշութիւն, ճախողութիւն չէ, այլ վրձինի հարուած մը՝ մեծ ամբողջին անհրաժեշտ մէկ մասը:

Երբ կեանքը դիտենք որպէս շարունակուող նկար, կը սորվինք անկատարութիւնը ընդունիլ իբրեւ ընթացքին մէկ մասը: Կը հասկնանք, թէ այսօր սխալ թուացողը վաղը կրնայ դառնալ կերպարանափոխութեան հիմքը: Գոյնի շերտերը՝ երբեմն պայծառ, երբեմն խամրած, երբեմն խոով, երբեմն գիտակից, կը պատմեն մեր ով ըլլալն ու մեր դառնալիքը:

Կտաւին դարձեալ մօտենալու համարձակութիւնը

Կեանքի նկարը նկարակալին վրայ պահելը քաջութիւն կը պահանջէ: Կը նշանակէ յաճախ վերադառնալ կտաւին, նոյնիսկ երբ չենք գիտեր ինչ աւելցնել, կամ կը վախնանք տեսնելէ այն, ինչ որ մեզի կը սպասէ: Ես ալ շատ անգամ վերադարձած եմ իմ կտաւիս՝ կանգ առած, յուսախաբ կամ շուարած պահերու մէջ, չգիտնալով պէ՞տք է նոր գոյն մը աւելցնեմ, թէ՞ ջնջեմ այն, ինչ որ այլեւս ճշմարիտ չէր:

Մարդ պէտք է ինքնիրեն հարց տայ.

Ի՞նչ պէտք է փոխուի:

Ի՞նչ կրնամ աւելի լաւ ընել:

Ի՞նչ կ'ուզեմ, որ այս նկարը իմ ով ըլլալս պատմէ:

Տարիներու ընթացքին, աճելով ու փոխուելով, նոր փորձառութիւններ, յարաբերութիւններ եւ յայտնութիւններ կը դառնան մեր ներկայանակին գոյները: Երբեմն կեանքը մեզի կը պարզեւէ լուսաւոր երանգներ՝ սիրոյ, յաջողութեան եւ տօնախմբութեան պահեր, որոնք կտաւը կը պայծառացնեն: Ուրիշ ժամանակներ՝ մուրթ գոյներ՝ կորուստի, վիշտի ու պայքարի, որոնք խորութիւն եւ հակադրութիւն կու տան նկարին: Երկուքն ալ անհրաժեշտ են: Առանց խաւարի՝ լոյսը իմաստ չի ստանար: Առանց հակադրութեան՝ նկարը խորք չի ստանար:

Անվերջ ընթացքի մէջ գործ մը

Ես կը գնահատեմ այն պահերը, երբ կանգ կ'առնենք մեր «անաւարտ նկարին» դիմաց՝ նայելու, խորհելու, զգալու եւ նոր գոյն մը յայտնաբերելու համար: Կեանքի գեղեցկութիւնը հոն է, որ ան երբեք ամբողջապէս չի վերջանար: Մինչեւ վերջին շունչը կը շարունակենք բան մը աւելցնել մեր կտաւին: Ու թերեւս կեանքի ամէնէն քաղցր մղումներէն մէկը ուրիշներու համար ներշնչող գոյն ու հիւսուածք փոխանցելն է:

Եւ թերեւս մեծագոյն պարգեւը այն գիտակցութիւնն է, թէ մեր նկարը, որքան ալ անձնական ու եզակի ըլլայ, մաս կը կազմէ աւելի ընդարձակ պատկերասրահի մը՝ մարդկային ընդհանուր փորձառութեան, որ մեզ իրարու կը կապէ:

Ահա թէ ինչու սորված եմ հանգիստ զգալ կեանքիս նկարը պահելով նկարակալին վրայ եւ յաճախ վերադառնալով անոր: Մօտեցէ՛ք ձեր սեփական անաւարտ գեղանկարին ամէնօրեայ կեանքէն քաղուած նոր ներշնչումով, քաջութեամբ եւ բաց սրտով: Յիշեցէ՛ք, որ արուեստի ամէնէն արտակարգ գործերը անոնք չեն, որ կատարելապէս անթերի են, այլ անոնք՝ որոնց մէջ ստեղծողին ոգին տակաւին կենդանի է:

(Լոնտոն / Լոս Անճըլըս) ■